

Արտասահմանյան գրականություն



ԴԱՆԹԵ ԱԼԻԳԻԵՐԻ (1265-1321)



Ուշ միջնադարում պոեզիայում գերակշռում էին լատիներեն գրվածքները, որի պատճառով դրանք հասանելի էին միայն հարուստ և կրթված ընթերցողներին: Սակայն Դանթեն հայրենի գրականության մեջ մայրենի լեզվի օգտագործման հիմքը դրեց: Դրա շնորհիվ Դանթեն կարևոր դեր է խաղացել Իտալիայի ազգային լեզվի ստեղծման գործում: Դանթեի հռչակը տարածվել է նաև իր երկրի սահմաններից շատ ու շատ հեռու: Բացի այդ, նրան է վերագրվում *սերցինի* օգտագործումը, որը եռատող բանաստեղծական տան տեսակ է:

Իտալիայում Դանթեին անվանում են il Sommo Poeta («Գերագույն բանաստեղծ»), հաճախ էլ կոչում էին «իտալերենի հայր» և համարում արևմտյան քաղաքակրթության խոշորագույն գրողներից մեկը:

Դուրանտե դելլի Ալիգիերին (*իտալերեն՝* Durante degli Alighieri) ծնվել է **Ֆլորենցիայի Հանրապետության** (ներկայիս Իտալիա) **Ֆլորենցիա** քաղաքում: Նրա ծննդյան ճշգրիտ ամսաթիվը անհայտ է, թեև ենթադրվում է, որ նա ծնվել է մոտ 1265 թվականին: Դա կարելի է եզրակացնել «Աստվածային կատակերգության» մեջ ինքնակենսագրական պատումներից: Դրա առաջին պատումը՝ «**Դժոխքը**», սկսվում է «Nel mezzo del cammin di nostra vita»-ից («Մեր կյանքի կես ճանապարհին»), որից կարելի է ենթադրել, որ նա եղել է 35 տարեկան, քանի որ ըստ **Աստվածաշնչի՝** մարդու միջին տարիքը 70-ն է, և քանի որ նրա երևակայական ճանապարհորդությունը տեղի է ունեցել 1300 թվականին, նա, հավանաբար, ծնվել է մոտ 1265 թվականին: «Աստվածային կատակերգության» «Քավարան» մասի որոշ տողեր հնարավորություն են ընձեռում կռահելու, որ նա ծնվել է **Երկվորյակներ** նշանի տակ:

Հայրը՝ Ալիգիերո Ալիգիերին, իրավաբան էր, աշխատում էր քաղաքի բանկային մի բաժանմունքում: Դանթեն մանուկ հասակում կորցնում է մորը, իսկ պատանեկության տարիներին՝ հորը: Մանկուց է նրա մեջ առաջացել սերը գրականության հանդեպ:

Երիտասարդ տարիներից նա ներգրավվում է քաղաքական դեպքերի հորձանապտույտի մեջ: Գվելֆյան կուսակցության կողմից **1289** թվականի **հուլիսի 11-ին Կամպալդինոյի ճակատամարտին** մասնակցում է որպես հեծյալ զինվոր: Հետո, երբ գվելֆների և գիբելինների փոխարեն հանդես են գալիս Սևերն ու Սպիտակները, անցնում է վերջինների կողմը:

Դանթեն հետագայում պետական բարձր պաշտոններ է վարել, կատարել դիվանագիտական պատասխանատու հանձնարարություններ:

Ֆրանսիայի **թագաժառանգ Կարլ Վալուան** զորքով շարժվում է Ֆլորենցիա: Թշնամին ուժեղ էր, սեփական ուժերով դիմադրել հնարավոր չէր: Աղետը կանխելու համար հարկավոր էր շտապ դեսպանություն ուղարկել **Հռոմի պապի** մոտ: Բոլորի հայացքներն ուղղվում են դեպի Դանթեն: **Ջովանի Բոկաչոն՝** Դանթեի առաջին կենսագիրը, պատմում է, որ երբ Դանթեին հարցրին, թե ինքն ինչ կարծիքի է, նա պատասխանեց. «Եթե ես մնամ, ի՞նչ կգնա: Եթե ես գնամ, ի՞նչ կմնա»:

Դիվանագիտական առաքելությունից Ֆլորենցիա վերադառնալով՝ նա հանդիպում է Սևերի հաշվեհարդարին: Պատժի ենթակա Սպիտակների ցուցակում էլ էր Դանթեի անունը: Դատավճիռը ձևակերպված էր այսպես. «Սևերի դեմ պայքարելու համար 5000 **լիր** տուգանք, երկու տարվա աքսոր՝ **Տոսկանայի** սահմաններից դուրս, գույքի բռնագրավում, տունուտեղի

հիմնահատակ ավերում»։ Հրամանի տակ ավելացված էր՝ երեք օրվա ընթացքում ներկայանալ քաղաքագլխին։

Դանթեն չի ներկայանում։ Քաղաքագլուխը նախկին հրամանին ավելացնում է. քանի որ դատապարտվածների չներկայանալը նշանակում է հանցանքը ընդունել, նրանց համար նոր դատավճիռ է նշանակվում՝ «Կրակի վրա այրել, մինչև մահանա»։ Սա հրապարակվել է **1302** թվականի **մարտի 10**-ին։ Դանթեի տունը հիմնահատակ քանդում է քաղաքագլխի զինված ասպետների խումբը՝ 150 քարտաշների հետ։

Դանթեն ընտանիքով բռնում է տարագրության տխուր ճանապարհը, այլևս Ֆլորենցիա չի վերադառնում։ Աքսորի չորրորդ տարում նամակով հայրենի քաղաք վերադառնալու թույլտվություն է խնդրում, որը անհետևանք է մնում։ **1315** թվականի մի օրենքով նա կարող էր վերադառնալ Ֆլորենցիա։ Պայմանը հետևյալն էր՝ դատապարտյալը պետք է երաշխավորագիր ներկայացնի, բանտարկվի, որից հետո՝ բանտարկյալի անարգանքի գլխարկը գլխին, վառած մոմը ձեռքին պիտի գնա Սան-Ջովանի եկեղեցի, խոնարհաբար ծնկի գա, ապաշխարի՝ որպես «մեղքերը քավող հանցագործ»։ Դանթեն չէր կարող ընդունել նման ստորացուցիչ պայմանը։ 1315 թվականի **հոկտեմբերի 15**-ին մեկ անգամ ևս որոշում է կայացվել՝ մահվան նոր դատավճիռ, այս անգամ՝ բանաստեղծի երկու որդիների հետ միասին։ Դատավճիռը հանդիսավոր կերպով հաստատել է փոխարքան։

Տարագրության տարիներին Դանթեն վերստին քաղաքական իրադարձությունների կենտրոնում էր։ Ֆլորենցիան Սևերի իշխանությունից ազատագրելու հույսը և մասնատված Իտալիայի միավորման հեռանկարը նա կապում էր գերմանական կայսր **Հենրիխ 7-րդի** հետ, որ այդ ժամանակ մեծ զորքով շարժվում էր դեպի Իտալիա։

Դանթեն չէր հասկանում, որ գերմանական կայսեր գալուստը ազգակործան չարիք է, սակայն գրել է հավատով ու համոզմունքով՝ ղեկավարվելով Ֆլորենցիայի բարօրության, Իտալիայի միավորման ակնկալիքով։ Հենրիխի մահից հետո, իրական հեռանկարներ չտեսնելով, Ֆլորենցիա վերադառնալու հույսը կորցրած, քաղաքական ասպարեզը թողնում է։

Դանթեն վերջին տարիներն անցկացրել է **Վերոնայում**, ապա **Ռավեննայում**, որտեղ էլ կնքել է իր մահկանացուն։

Ինչպես տեսանք, Դանթեի ժամանակ Իտալիայում, ինչպես և եվրոպական երկրներում, գրքի լեզուն **լատիներենն** էր, որը ժողովրդին անհասկանալի էր։

«**Քաղցր նոր ոճի**» բանաստեղծները սկսեցին ժողովրդին հասկանալի լեզվով

գրել, բայց ժամանակակից իտալերենը, որպես իշխող գրական լեզու, դեռևս չէր հաստատվել: Լատիներենի կողմնակիցները այն համարում էին ոչ պոետական լեզու, գիտական, փիլիսոփայական բովանդակություն արտահայտելու համար ոչ պիտանի:

Դանթեն խիզախ քայլ արեց. պահանջեց մի կողմ թողնել լատիներենը, գրական լեզուն դարձնել ժողովրդի խոսակցական լեզուն: Նա համարում էր, որ գրականությունը գիտնականների փոքրիկ խմբի համար չէ:

Դասական լատիներենի ներկայացուցիչները արհամարհում էին ժամանակակից **իտալերենը**: Գրական աշխարհում ևս թերահավատ կարծիք էր տիրում: **Սիցիլիական դպրոցի բանաստեղծները** գրում էին **ֆրանսերեն**: Դանթեն անեծքի խոսքեր էր ասում նրանց հասցեին. «*Հավիտենական ամոթ այդ չարամիտ մարդկանց, որոնք զովաբանում են օտար ժողովրդի լեզուն և արհամարհում իրենց սեփականը*»:

Խոսակցական լեզուն կամ որևէ **բարբառ** գրական լեզու դարձնելը դեռ ամենը չէր: Անհրաժեշտ էր հմտորեն օգտագործել դրա բոլոր հնարավորությունները: Դանթեն դա կատարեց: **Տոսկանայի** խոսակցական լեզուն այնպիսի կատարելության հասցրեց, առանձնապես «Աստվածային կատակերգությունում», որ նրանից հետո լատիներենին դիմելը անօգուտ էր:

Նոր գրական լեզվի ստեղծման հարց հետազայում առաջացավ նաև եվրոպական մյուս երկրներում, բայց առաջին անգամ դա տեղի ունեցավ Իտալիայում:

«ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ»

«Աստվածային կատակերգությունը» **Դանթեի** գլուխգործոցն է: Գրել սկսել է **1308** թվականին, ավարտել՝ **1321** թվականին:

Վերնագիրը եղել է «*Կատակերգություն*»: Աստվածային **մակդիրն** ավելացրել են հետո: Դրանով նկատի չեն ունեցել, որ **պոեմի** գործողությունը կատարվում է երկնային ոլորտում, այլ արտահայտել են գեղարվեստական վեհությունը՝ *աստվածային գործ*: Ժամանակակից ըմբռնումներից ելնելով՝ «Աստվածային կատակերգությունը» նման չէ ժամանակակից կատակերգության: Այն անվանել են այլ ըմբռնումներից ելնելով:

14-րդ դարում իտալական ամբողջ գրականությունը հստակ բաժանված էր երկու մասի: Ողբերգությունը համարվում էր բարձր աստիճանի գրականություն, որն այն ժամանակ գրվում էր «գրական» իտալերենով, իսկ կատակերգությունը վերաբերում էր «ցածր» դասի գրականությանը, որը գրվում էր խոսակցական

լեզվով, որպեսզի հասարակ ժողովրդի համար հասկանալի լիներ:

«Աստվածային կատակերգություն» պոեմը բաղկացած է երեք մասից.

- Դժոխք
- Քավարան
- Դրախտ

Սրանք իրենց հերթին բաժանվում են առանձին մասերի. «Դժոխքը» բաղկացած է ինը պարունակից, «Քավարանը»՝ յոթ բոլորակից, «Դրախտը»՝ երկնային ինը ոլորտներից: Մասերից յուրաքանչյուրը բաղկացած է 33 երգից: Նախերգանքի հետ միասին բոլորը՝ 100 երգ: Պոեմը գրված է տերցիններով՝ հանգավոր եռատողերով:

Պոեմի գործողությունները կատարվում են հանդերձյալ աշխարհում, գործող անձինք մարդկանց հոգիներն են: Գործող անձանց մեծագույն մասը պատմական ծանոթ, իրական մարդիկ են: Բանաստեղծը պատմում է նրանց հոգիների և երկրային գործերի, կենդանի ժամանակ կատարած արարմունքների մասին: Պոեմը պատմողական ձև ունի: Սյուժետային հենքը բանաստեղծի երևակայական ճանապարհորդությունն է անդրշիրիմյան աշխարհ՝ դժոխքում, քավարանում, դրախտում: Այս առանցքի վրա է հյուսված պոեմի կոմպոզիցիան:

Դանտեի Ալիգիերիի գլխավոր երկը, որը համաշխարհային հռչակ է բերում բանաստեղծին, «Աստվածային կատակերգությունն» է: Պոեմը ոչ միայն Դանտեի գաղափարաքաղաքական և գեղարվեստական մտքի զարգացման արդյունքն է, այլև ողջ միջնադարյան մշակույթի գեղարվեստական սինթեզը: Հենց որպես «Աստվածային կատակերգության» հեղինակ՝ Դանտեն միաժամանակ Միջնադարի և Վերածնության գրող է:

Դանտեն կոչել է իր պոեմը «Կատակերգություն»՝ կիրառելով այդ բառը միջնադարյան իմաստով: Միջնադարում այդպես էր կոչվում ցանկացած երկ, որն ունի տխուր սկիզբ և բարեհաջող ավարտ: Ինչ վերաբերում է «Աստվածային» մակդիրին, ապա այն XVI դարի հավելում է:

Պոեմի կոմպոզիցիան շատ հստակ է: Այն բաժանվում է երեք մեծ մասերի, որոնք պատկերում են անդրշիրիմյան կյանքի երեք աշխարհները՝ դժոխքը, քավարանը և դրախտը: Յուրաքանչյուր մաս բաղկացած է 33 երգից, ընդ որում՝ առաջին մասին ավելանում է ևս մեկ երգ, որն ունի ներածության բնույթ: Այսպիսով՝ երգերի ընդհանուր քանակը հասնում է հարյուրի: Պոեմը չափածո է և գրված է տերցիններով:

Արդեն «Նոր կյանք» շարքում 9 թիվը խորհրդավոր կերպով բանաստեղծի կյանքի բոլոր էական իրադարձությունների ուղեկիցն է: «Աստվածային կատակերգության» մեջ 3 և 9 թվերի վրա է հիմնված հանդերձյալ աշխարհի ողջ կառուցվածքաբանությունը: Կարելի է ավելացնել նաև, որ յուրաքանչյուր մաս ավարտվում է միևնույն բառով՝ «աստղեր», որ Քրիստոսի անունը հանգավորվում է միայն ինքն իր հետ և չի հիշատակվում դժոխքը ներկայացնող մասում:

Ողջ ինքնատիպությամբ հանդերձ՝ Դանտեի պոեմն ունի բազմաթիվ միջնադարյան աղբյուրներ: Պոեմի ֆաբուլան վերարտադրում է միջնադարյան կրոնական գրականության մեջ տարածված «տեսիլների» ժանրը, այսինքն՝ բանաստեղծական պատումներն այն մասին, թե ինչպես է մարդուն հաջողվում տեսնել հանդերձյալ աշխարհի գաղտնիքները: Պոեմն ունի նաև անտիկական աղբյուրներ, մասնավորապես՝ Վերգիլիուսի «**Էնեականը**»: Պատահական չէ, որ դժոխք և քավարան իջնելու համար Դանտեն որպես ուղևոր է վերցնում հենց Վերգիլիուսին: Վերգիլիուսը ստանձնում է հրեշտակի դերը: Հռոմեացի բանաստեղծի նշանակության այդպիսի ընդգծումը բացատրվում է նրանով, որ միջնադարում Վերգիլիուսին (չորրորդ էկլոգի մի հատվածի զուտ բիբլիական մեկնաբանության արդյունքում) համարում էին քրիստոնեության ավետաբերներից մեկը: Դանտեի «տեսիլը» նպատակ ունի ոչ թե հեռացնել մարդուն երկրային գոյության ունայնությունից, ինչպես միջնադարյան «տեսիլների» դեպքում է, այլ արտացոլել երկրային կյանքի մեղսավոր կողմերը՝ մտքերով դեպի հանդերձյալ կյանքը շրջվելու համար:

Պատկերելով դժոխքը՝ Դանտեն ներկայացնում է ամենատարբեր կրքերով առնված կենդանի մարդկանց մի ողջ պատկերասրահ: Թերևս բանաստեղծն առաջինն է արևմտյան գրականության մեջ պոեզիայի առարկա դարձնում մարդկային կրքերի պատկերումը և այդ բանն անելու համար իջնում է անդրաշխարհ: Դանտեն կերպավորում է իր մեղսավորներին: Նա հաճախ գործ ունի իտալական իրականությունից վերցրած նյութի հետ: Դժոխքում եռում են քաղաքական կրքեր: Դժխաբնակները զրուցում են Դանտեի հետ, վիճում: Հիբելին Ֆարինատա դելլի Ումբերտոն նախկինի պես ասելությամբ է լցված գվեթների նկատմամբ: Դանտեն ևս չի թաքցնում այստեղ իր քաղաքական կողմնորոշումը: Հանդերձյալ կյանքում մեղքերի դիմաց հատուցելու գաղափարը ստանում է քաղաքական երանգ: Ահա՛ ինչու դժոխքում են Դանտեի շատ թշնամիներ:

Իր ընդհանուր մտահղացումով ֆանտաստիկ այս պոեմը ամբողջովին կառուցված է ռեալ կյանքի բեկորներից: Որքան ավելի անսովոր են նկարագրվող տեսարանները, այնքան ավելի ակնառու է բանաստեղծը փորձում ներկայացնել

դրանք ընթերցողին: Դանտեն օժտված է պլաստիկական նրբանկատությամբ, որը թույլ է տալիս գրեթե քանդակային ճշտություն հաղորդել պատկերին: Այսպես, Ֆարինատան հպարտ կանգնած է իր գերեզմանի մեջ, տրուբադուր Բերտրան դը Բորնը ձեռքի մեջ բարձր պահում է սեփական գլուխը, իսկ տրուբադուր Սորդելլոն նստած է հպարտ՝ «ասես հանգստացող առյուծը»:

Բանաստեղծ Բրունետտո Լատինին ունի դժոխքի կրակներով չորացած դեմք: Ֆորեզեն սովից կմախքի է վերածվել: Հատկապես տպավորիչ է այդ իմաստով Ուոլինոյի դրվագը: Սա գտնվում է «Դժոխքի» իններորդ պարունակում, այնտեղ, որտեղ իրենց պատիժն են կրում դավաճանները: Ուոլինոն կրծում է իր թշնամու՝ Ռուջերիի կոկորդը, որը անարդարացիորեն դավաճանության մեջ էր մեղադրել Ուոլինոյին, որդիների հետ փակել աշտարակում և սովի մատնել:

Ուոլինոյի պատմությունը, այն, թե ինչպես է նա ականատես եղել սեփական որդիների սովամահությանը, իսկ այնուհետև հոշոտել նրանց մարմինները, «Աստվածային կատակերգության» ամենաազդեցիկ հատվածներից է:

Նշված առանձնահատկությունները կապում են պոեմը Վերածնության արվեստի հետ, որի հետաքրքրության կենտրոնում է մարդու երկրային կյանքը: Սակայն Դանտեն չի կարող համարվել Վերածնության բանաստեղծ, քանի որ նրա մեջ դեռ մեծ չափով առկա է միջնադարյան մտածողության գիծը: Ողջ պոեմը գրված է այլաբանական լեզվով: Այսպես, օրինակ, պոեմի առաջին երգը հաղորդում է, որ Դանտեն կյանքի կեսին հայտնվում է մութ անտառում և կարող է հոշոտվել երեք գազանների՝ առյուծի, գայլի և հովազի կողմից: Անտառից նրան դուրս է բերում Վերգիլիուսը, որին ուղարկել է Բեատրիչեն: Պոեմի ողջ առաջին մասը այլաբանություն է: Մութ անտառը մարդու երկրային գոյությունն է: Երեք գազաններն այն արատներն են, որոնք կործանում են մարդուն՝ գոռոզությունը, ընչաքաղցությունը և վավաշոտությունը: Վերգիլիուսը երկրային իմաստությունն է, իսկ Բեատրիչեն՝ երկնային իմաստությունը: Նմանատիպ այլաբանություններով են լեցուն նաև քավարանը և Դրախտը: Քավարանում են այն մեղսագործները, որոնք դատապարտված չեն հավերժական տառապանքի և կարող են մաքրվել: Մաքրման պրոցեսը խորհրդանշվում է յոթ P տառերով (peccatum — մեղք), որոնք գրվում են բանաստեղծի ճակատին հրեշտակի ձեռքով և նշում են յոթ մահացու մեղքերը: Քավարանի յոթ բլուրակներից յուրաքանչյուրն անցնելուց հետո մեկական տառ ջնջվում է: Երբ անցնելով քավարանը՝ Դանտեն հասնում է Դրախտին, Վերգիլիուսը լքում է նրան, քանի որ հետագա ընթացքը հասու չէ հեթանոսին:

Վերգիլիուսին փոխարինում է Բեատրիչեն: Երկրային իմաստնությանը ավելանում է երկնային իմաստնությունը: Առաջնորդվելով իր սիրով՝ Դանտեն հետևում է Բեատրիչեին: Նրա սերը ազատվում է ամեն երկրայինից և մեղսավորից: Սերը դառնում է առաքինի ու կրոնական, և նրա վերջնանպատակն է Աստծո տեսանումը, որը հենց սեր է:

ԴԺՈՒՔ

ԵՐԳ ԱՈՍՁԻՆ

- ...31 Եվ ահա ճիշտ իմ վերելքի սկզբին,
Թեթևաշարժ ու ժիրաժիր մի հովազ,
Որ պատված էր պիսակներով երփներփին,
- 34 Դեմքս ելավ ու չթողեց բարձրանալ,
Այլ մանավանդ ճամփաս այնպես խափանեց,
Որ քանիցքս ես ուզեցի ետ դառնալ:
- 37 Նախաժամն էր արշալույսի վաղորդյան,
Եվ արևն այն աստղերի հետ էր ծագում,
Որոնց հետ էր այնժամ, երբ Սերն աստվածյան
- 40 Շարժում փվեց մարմիններին գեղաբես:
Գտնելով պահն ու եղանակն հուսալի,
Արդեն այնքան երկյուղ չէի զգում ես
- 43 Այն գազանից՝ պատած մորթով գոյնզգոյն.
Բայց ես նորից համակվեցի սոսկումով,
Երբ երևաց ինձ մի առյուծ հանկարծային:
- 46 Սա կարծես թե իմ վրա էր հարձակվում,
Ահիպարան ու մոլեգին կեցվածքով,
Որից օդն իսկ սարսափահար էր թվում:
- 49 Նույն պահին ես փեսա մի գայլ էգ ու չոր,
Որ սովահար ու անհագ էր երևում
Եվ շարերի կյանքն էր դարձրել փանջավոր:
- 52 Սա ինձ այնքան պատճառ դարձավ խոռվքի՝
Քստմենելի ու առեղի իր փեսքով,
Որ ես արդեն կորցրի հույսըս վերելքի:

- 55 Եվ ինչպես նա, ով դիզում է անընդհար,
Բայց երբ հանկարծ իր ձեռք բերածն է կորցնում,
Տխրում է և իրեն զգում հույժ վհար,
- 58 Այսպես վհար ինձ զգացի, հիրավի,
Երբ գայլը ինձ ետ էր քշում դեպ այնտեղ,
Ուր շողերը չեն թափանցում արևի:
- 61 Մինչ ես դեպի հովիտն էի թավալվում,
Իմ աչքերին ներկայացավ մի հոգի,
Որը վաղուց ի վեր լուսձ էր թվում:
- 64 Տեսնելով այդ ամայության մեջ նրան,
Ես գոչեցի. «Ողորմիր ու փրկիր ինձ,
Իրական մարդ դու լինես, թե ուրվական»:
- 67 Պատասխանեց. «Մարդ չեմ արդ, մարդ եղել եմ.
Ես սերել եմ ծնողներից լոմբարդից
Եվ ծնվել եմ Մանտովայում-աննսեմ.
- 70 Ծնվել եմ ուշ, օրոքն Հուլիոս Կեսարի,
Ապրել Հռոմում Օգոստոսի շուքի փակ,
Երբ դեռ կային սուր աստվածներն ազգերի:
- 73 Եղա պոետր և երգեցի փառքն անանց
Անքիսորդու, որ հեռացավ Տրոյայից,
Երբ հրկիզվեց Իլիոնը սիգապանծ:
- 76 Բայց դու ինչո՞ւ վայրն ես գնում փանջանքի,
Ինչո՞ւ համար չես ելնում լեռն հեշտավետր,
Որ սկիզբն է պատճառն ամեն բերկրանքի»:
- 79 Ես պատասխան փվի դեմքով պատրկառուն.
«Դո՞ւ ես Վիրգիլն և այն աղբյուրը, ուրկից
Պերճ խոսքերի գետ է հորդել լայնահուն:

- 82 *Օ՛, դու բոլոր պոետների փառք ու լույս,
Արժեն սերն ու սրբությունը հարապւ,
Որով հապորդ վերձանեցի խորասույզ:*
- 85 *Դու ես վարպետս ու հեղինակս իմ երեց.
Դու ես լոկ նա, որից էլ ես ստացա
Գողարիկ ոճը, որը պատիվ ինձ բերեց:*
- 88 *Տես գազանը, որ ճամփաս է խափանում,
Օգնիր ինձ, ո՛վ հռչակավոր իմաստուն,
Նա իմ բոլոր մարմինը դող է հանում»:*